Բաղկացած է 9 էջից

Հաստատված է Հայաստանի գործատուների հանրապետական միության Խորհրդի 12.07.2025թ.-ի հերթական նիստի թիվ 1 որոշմամբ

Նախագահ՝ Վ.Համբարձումյան

ԵՄ-ՀՀ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» 366-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ԳՈՐԾԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

2025թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. 2017թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (այսուհետ՝ ՀԸԳՀ) 366-րդ հոդվածի համաձայն նախատեսվում է ձևավորել Քաղաքացիական հասարակության պլատֆորմ (այսուհետ՝ ՔՀՊ)՝ կազմված Եվրոպական միության քաղհասարակության, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի ներկայացուցիչներից և Հայաստանի Հանրապետության քաղհասարակության, այդ թվում՝ Հայաստանում գործող արհմիութենական և գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներից:

1.2. Սույն կարգով սահմանվում են ՔՀՊ-ի կազմում ընդգրկվելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված գործատու կազմակերպությունների (ներառյալ՝ բիզնես ասոցիացիաների, հիմնադրամների) ներկայացուցիչների (այսուհետ՝ Ներկայացուցիչ) ընտրությունն իրականացնող ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ Ընտրական հանձնաժողով) գործառույթների, ինչպես նաև Ընտրական հանձնաժողովի գործունեության կազմակերպման, ՔՀՊ-ի անդամների թեկնածուների առաջադրման և ընտրության (այսուհետ՝ ընտրություններ) անցկացման ընթացակարգերը:

2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

2.1.Ընտրական հանձնաժողովը կազմված է 7 (յոթ) անդամից, որոնցից չորսին նշանակում է Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (այսուհետ՝ ՀԳՀՄ), մեկին՝ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը (այսուհետ՝ ՀԱԳՄ), մեկին՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը (այսուհետ՝ ՀԱՊ) և մեկին՝ Եվրոպական բիզնես ասոցիացիան (այսուհետ՝ ԵԲԱ)՝ իրենց ներքին իրավակարգավորումներին համապատասխան՝ ՀԳՀՄ-ի գրավոր առաջարկով:

2.2.Ընտրական հանձնաժողովի անդամը չի կարող ներկայանալ ՔՀՊ թեկնածու գործատու կազմակերպություն (այսուհետ՝ Թեկնածու կազմակերպություն) այս գործընթացներում: Նրա ներկայացրած կազմակերպությունն իրավունք ունի որպես թեկնածու պատվիրակել այլ անձի:

2.3.Ընտրական հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

2.4.Ընտրական հանձնաժողովի գործունեությունը հիմնված է Թեկնածու կազմակերպությունների ընտրության արդարության, պայմանների հավասարության, ընթացակարգի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների վրա:

2.5.Ընտրական հանձնաժողովը՝

2.5.1.Կազմակերպում և անցկացնում է Թեկնածու կազմակերպության ընտրությունը,

2.5.2.Իրականացնում է ներկայացված փաստաթղթերի ստուգում Թեկնածու կազմակերպությունների համապատասխանության վերաբերյալ՝ համաձայն սահմանված չափանիշների,

2.5.3.Կազմում և հրապարակում է հաղթող ճանաչված վեց Ներկայացուցիչների, այդ թվում՝ երեք փոխարինող անդամների ցուցակը,

2.5.4.Կարգավորում է ընտրության գործընթացի հետ կապված այլ հարցեր:

2.6.Ընտրական հանձնաժողովի նիստն իրավազոր է անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում:

2.7.Ընտրական հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2.8.Ընտրական հանձնաժողովի նիստերը ձայնագրվում են, նիստի վերաբերյալ կազմվում է թղթային արձանագրություն:

2.9.Ընտրություններին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3. ԹԵԿՆԱԾՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. ***Թեկնածու կազմակերպությունը*** պետք է ունենա՝

3.1.1.Վերջին 7 տարիների ընթացքում նվազագույնը 3 տարվա ակտիվ գործունեություն «Հայաստանի Եվրոպական ինտեգրման» բնագավառում և/կամ «Հայաստանի ընդլայնված գործընկերության» համաձայնագրով սահմանված ոլորտներից առնվազն մեկում, որի արդյունքում կազմվել են հետազոտական զեկույցներ, վերլուծություններ, հայեցակարգեր և այլն - **առավելագույնը 5 միավոր:**

3.1.2.Բավարար կարողություններ ՔՀՊ-ում իր գործունեությունը արդյունավետ իրականացնելու համար, այդ թվում՝ աշխատակազմ, գրասենյակ, գույք և տեխնիկա, կայք և ինտերնետ կապ, ֆինանսավորում - **առավելագույնը 3 միավոր:**

3.1.3.ՀԸԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին

խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլական - **<u>առավելագույնը</u> 3 միավոր:**

3.1.4.ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը - **<u>առավելագույնը</u> 3 միավոր**:

3.2.***Ներկայացուցիչ*** կարող է լինել Թեկնածու կազմակերպության՝ ա) կոլեգիալ ղեկավար մարմնի անդամ, բ) գործադիր մարմնի ղեկավար, գ) աշխատակազմի անդամ:

Ներկայացուցիչը պետք է ունենա՝

3.2.1.Հանրային հեղինակություն, արդյունավետ, կառուցողական և բազմակողմ համագործակցություն իրականացնելու կարողություն - **<u>առավելագույնը</u> 3 միավոր:**

3.2.2.Անգլերեն լեզվի իմացություն. որպես անգլերենի բավարար մակարդակի իմացության ապացույց՝ դիմողը ներկայացնում է կամ բարձրագույն կրթության գործընթացն անգլերենով անցնելու մասին փաստաթուղթ, կամ անգլերեն լեզվի իմացությունը հավաստող վկայական: Հակառակ դեպքում ներկայացուցիչն անցնում է Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված որակավորված մասնագետի կողմից անգլերենի ստուգում - **<u>առավելագույնը</u> 3 միավոր**: Հանձնաժողովը կարող է սահմանել նվազագույն չափանիշներ:

3.3.Ներկայացուցիչը չի կարող հանդիսանալ ներկա կամ նախորդող առնվազն 6 ամիսների ընթացքում որևէ պետական կառավարման համակարգի մարմնի աշխատակից:

3.4.Թեկնածու կազմակերպություններին և Ներկայացուցիչներին ներկայացվող պահանջների բավարարման միավորների անցողիկ շեմը սահմանվում է **<u>նվազագույնը</u> 10 միավոր:**

4. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

4.1.Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը պետք է ներառեն՝

4.1.1.Թեկնածու կազմակերպության պետական գրանցման վկայականի կամ քաղվածքի պատճենը, կանոնադրության պատճենը, կազմակերպության ոլորտային գործունեության մասին տեղեկանքը (համառոտ նկարագիր),

4.1.2.«Հայաստանի Եվրոպական ինտեգրման» բնագավառում և/կամ «Հայաստանի ընդլայնված գործընկերության» համաձայնագրով սահմանված ոլորտներից առնվազն մեկում վերջին 7 տարիների ընթացքում գործունեության իրականացման վերաբերյալ տեղեկանք (Թեկնածու կազմակերպությունից) և դրա(նց) արդյունքներով կազմված զեկույց(ներ)ը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով կամ դրանց էլեկտրոնային հղումները:

4.1.3.Թեկնածու կազմակերպության կազմակերպական կարողությունները հավաստող տեղեկանք (թեկնածու կազմակերպությունից):

4.1.4.ՀԳԸՀ-ի իրականացման գործում պետական կառավարման համակարգի մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու վերաբերյալ շարադրված տեսլականը 1 էջ A4 էջի ծավալով:

4.1.5.ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման վերաբերյալ շարադրված տեսլականը 1 էջ A4 էջի ծավալով:

4.1.6.Ներկայացուցչի ինքնակենսագրականը:

4.1.7.Բարձրագույն կրթության գործընթացն անգլերենով անցնելու մասին փաստաթուղթ կամ անգլերեն լեզվի իմացությունը հավաստող վկայական:

4.1.8.Լրացված Հայտարությունն ու Երաշխավորագիրը, որոնք ներկայացված են սույն կարգին կից *ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:*

4.2.Անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացվել ինչպես առձեռն հետևյալ հասցեով՝ Վ. Վաղարշյան 12, Ակցեռնի շենք, 5-րդ հարկ, այնպես էլ առցանց՝ ուղարկելով ՀԳՀՄ պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1. Սույն կարգի ընդունումից և ՀԳՀՄ պաշտոնական կայքում դրա հրապարակումից հետո, 10 (տաս) օրվա ընթացքում ձևավորվում է Ընտրական հանձնաժողովը, որը ձևավորումից հետո 5 (հինգ) օրվա ընթացքում ՀԳՀՄ աշխատակազմի միջոցով գործատու կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրություններ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է ՀԳՀՄ պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում, ինչպես նաև, ըստ հնարավորության, զանգվածային լրատվության այլ միջոցներով:

5.2. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները՝

5.2.1.ՀՀ և ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» նախատեսված ՔՀՊ Թեկնածու կազմակերպություններին և Ներկայացուցչին ներկայացվող պահանջները,

5.2.2. ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

5.2.3. մրցույթի անցկացման պայմանները,

5.2.4. փաստաթղթերի ներկայացման ժամկետները և վայրը, այդ թվում՝ էլեկտրոնային

փոստի հասցեն:

5.3.ՀԳՀՄ-ն՝ ի դեմս աշխատակազմի, մրցույթի կազմակերպմանը աջակցելու համար կվարի քարտուղարությունը՝ փաստաթղթերը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով ստանալու համար:

5.4.Ընտրություններին մասնակցելու նպատակով՝ Ներկայացուցիչը հայտարարության հրապարակումից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում ՀԳՀՄ քարտուղարությանն է ներկայացնում ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), ինչպես նաև իր կոնտակտային տվյալները հետադարձ կապի ապահովման համար:

5.5.Փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե Քարտուղարությունում դրանք ստացվել են մինչև սույն կարգի 5.4. կետում նշված ժամկետի լրանալը, հակառակ դեպքում՝ համարվում են անվավեր:

5.6.Ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ Ներկայացուցիչը ծանուցվում է փաստաթղթերն ստանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում՝ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:

5.7.Փաստաթղթերն ընդունելիս Քարտուղարությունը պարզում է դրանց համապատասխանությունը պահանջված փաստաթղթերի ցանկին:

5.8.Ներկայացված փաստաթղթերը թերի լինելու կամ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում Ներկայացուցչին այդ մասին Քարտուղարության կողմից ծանուցվում է երեք օրվա ընթացքում:

5.9.Փաստաթղթերի թերությունները Ներկայացուցչի կողմից կարող են վերացվել 5 (հինգ) օրվա ընթացքում:

5.10.Քարտուղարությունը, ուսումնասիրելով Ներկայացուցչի փաստաթղթերը, սույն կարգի 5.4. կամ 5.9. կետերում նշված ժամկետներին համապատասխան մրցույթի հայտարարության հրապարակումից հետո ոչ ուշ, քան 20-րդ օրը լրանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում ամփոփում և Ընտրական հանձնաժողովին է ներկայացնում Թեկնածուների ցուցակը և փաստաթղթերը՝ անհրաժեշտության դեպքում նշելով փաստաթղթերում առկա թերությունները և դրանք վերացնելու կապակցությամբ սույն կարգի 5.7. – 5.9. կետերի համաձայն ձեռնարկված միջոցառումները և դրանց արդյունքները:

5.11.Ընտրական հանձնաժողովը իր գործունեությունը կսկսի Քարտուղարության կողմից փաստաթղթերի հանձնմանը հաջորդող 5 (հինգ) օրվա ընթացքում և կավարտի աշխատանքները գործունեությունը սկսելուց 5 (հինգ) օրվա ընթացքում:

5.12.Ընտրություններն անցկացվում են երկու փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային

ստուգման) փուլն է, իսկ երկրորդը՝ բուն քվեարկության փուլը: Ընտրությունների երկու փուլերն էլ կարող են իրականացվել ինչպես առկա, այնպես էլ առցանց կամ հիբրիդային ձևաչափերով:

5.13.Ընտրությունների փաստաթղթային ստուգման փուլում Ընտրական հանձնաժողովը ստուգում է փաստաթղթերի համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ հիմնավոր կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Ցանկության դեպքում՝ Ներկայացուցիչը կարող է մասնակցել ընտրությունների փաստաթղթային ստուգման և քվեարկության փուլերին:

5.14.Քվեարկության փուլում Ընտրական հանձնաժողովի անդամները սույն կարգով հաստատված չափանիշներին և ընթացակարգին համապատասխան գնահատում են քվեարկության փուլ անցած Ներկայացուցիչներին՝ ըստ 3.1. և 3.2. կետի պահանջների, այնուհետև գնահատման բոլոր արդյունքներով կազմակերպվում է փակ քվեարկություն, որի միջոցով հաստատվում են թեկնածուները սույն կարգի՝ 3.1. և 3.2. կետերում սահմանված պահանջներին և չափորոշիչներին համապատասխան:

5.15.Քվեարկության արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած վեց Ներկայացուցիչներից առավելագույն միավորներ ստացած երեքն ընդգրկվում են ՀԸԳՀ-ի ՔՀՊ-ում (հիմնական անդամներ), մյուս երեքը համարվում են փոխարինող անդամներ:

5.16.Ընտրված Ներկայացուցիչներից յուրաքանչյուրի հանրագումարային միավորները պետք է համապատասխանեն 3.4. կետում սահմանված անցողիկ շեմին:

5.17.Քվեարկության արդյունքներով հավասար միավորներ ստացած Ներկայացուցիչներից որևէ մեկին կամ մի քանիսին ՀԸԳՀ ՔՀՊ-ի գործատու կազմակերպությունների մասով հայաստանյան կազմի թեկնածուների ցուցակում ընդգրկելու նպատակով Ընտրական հանձնաժողովն անցկացնում է նոր քվեարկություն: Այս դեպքում, Ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ բաց քվեարկությամբ կատարում է ընտրություն մասնակիցներից որևէ մեկի օգտին: Ձայների հավասարության դեպքում՝ քվեարկությունը կրկնվում է մինչև քվեարկության արդյունքներով առավելագույն «կողմ» ձայներ ստացած և ընտրված մասնակցի (մասնակիցների) վերջնական հաստատումն ու արձանագրումը:

5.18.Սույն կարգով ՔՀՊ հիմնական և փոխարինող անդամների կազմում չեն կարող լինել միմյանց նկատմամբ առաջին կարգի ազգականներ (հայր, մայր, զավակ, ամուսին, եղբայր, քույր): Նման հանգամանքի առկայության դեպքում ազգակցական կապի մեջ գտնվողներից նախապատվությունը տրվում է առավելագույն քվե ստացողին:

5.19. Քվեարկության արդյունքների, այդ թվում՝ Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ կազմվում են արձանագրություններ:

5.20.Ընտրական հանձնաժողովը ցուցակը կազմելուն հաջորդող երեք օրվա ընթացքում ՀԳՀՄ պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում հրապարակում է ընտրված հիմնական և փոխարինող անդամների ցանկը՝ սույն կարգով նախատեսված ընթացակարգերի պահպանմամբ:

5.21.ՀԸԳՀ-ի ՔՀՊ հիմնական անդամների պարտականությունների իրականացման անհնարինության դեպքում նրանց գործառույթներն իրականացնում են փոխարինող անդամները՝ ըստ առավելագույն միավորների հաջորդականության:

5.22.ՀԸԳՀ-ի ՔՀՊ անդամները, այդ թվում՝ փոխարինող անդամները, ընտրվում են առավելագույնը երեք տարի ժամկետով:

6. ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

6.1. Ընտրական հանձնաժողովը ընտրությունը հայտարարում է չկայացած և կատարում նոր ընտրություն, եթե՝

6.1.1. Թեկնածուների թիվը վեցից պակաս է:

6.1.2. Քվեարկությանը ներկայացած մասնակիցների թիվը վեցից պակաս է:

6.1.3. Ընտրվողների թիվը վեցից պակաս է:

6.1.4. Ի հայտ են եկել այնպիսի խախտումներ կամ թերություններ, որոնք կարող էին ազդել քվեարկության և/կամ ընտրությունների ամփոփման արդյունքների վրա:

6.1.5. Լրացել է ՀԸԳՀ-ի ՔՀՊ անդամների, այդ թվում՝ փոխարինող անդամների պաշտոնավարման առավելագույն ժամկետը:

6.1.6. Առկա են թեկնածուների ընտրությունն իրականացնելու անհնարինության այլ դեպքեր:

6.2. ՀԸԳՀ-ի ՔՀՊ բոլոր հիմնական անդամների պարտականությունների իրականացման անհնարինության դեպքում նրանց պարտականություններն անցնում են փոխարինող անդամներին և իրականացվում է փոխարինող երեք նոր անդամների նոր ընտրություն:

6.3. Ընտրական հանձնաժողովը նոր ընտրություն անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն կարգի 6.1. կետում նշված որևէ հիմքի մասին պատշաճ տեղեկանալու օրվան հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում:

6.4. Նոր ընտրությունն անցկացվում է սույն կարգով հաստատված ընթացակարգերով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացառման, մարդու իրավունքների հարգման և ակտիվ մասնակցության վերաբերյալ

Ստորագրելով սույն հայտարարությունը՝ ես, …… ……-ս, երաշխավորում եմ, որ չեմ օգտագործի իմ դիրքը որպես Հայաստան-Եվրամիություն Քաղաքացիական հասարակության պլատֆորմի անդամ՝ իմ կազմակերպության կամ իմ առաջին կարգի ազգականների նյութական շահերը սպասարկելու նպատակով:

Հավաստում եմ, որ հարգում եմ մարդու իրավունքները և ազատությունները՝ առանց խտրականության ըստ ազգային, ռասայական, կրոնական, սեռային պատկանելության կամ սեռական ինքնության, քաղաքական կամ այլ համոզմունքների, սոցիալական ծագման, ունեցվածքային դիրքի, ծննդավայրի կամ այլ հատկանիշների:

Երաշխավորում եմ, որ ներգրավված կլինեմ Պլատֆորմի աշխատանքներին անհրաժեշտ ակտիվությամբ, առանց հարգելի պատճառների չեմ բացակայի նիստերից, կազմակերպած մյուս միջոցառումներից և հանդիպումներից, կապահովեմ իմ աշխատանքների առավելագույն թափանցիկությունն Պլատֆորմի անդամների համար:

Ստորագրող՝ …… Ստորագրություն՝……

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

կազմակերպության ռեսուրսների ներդրման, քաղաքական աֆիլիացման բացառման և մարդու իրավունքների հարգման վերաբերյալ

…… կազմակերպությունը, որի ներկայացուցիչը Հայաստան-Եվրամիություն քաղաքացիական հասարակության պլատֆորմում ներգրավվող …… ……-ն է, երաշխավորում է, որ կներդնի անհրաժեշտ ռեսուրսներ և կարողություններ նրա լիարժեք և անխափան գործունեությունն իրականացնելու համար:

Կազմակերպությունը երաշխավորում է, որ իր ներկայացուցիչը ընգրկված չէ պետական կառավարման մարմիններում:

Կազմակերպությունը հավաստում է, որ հարգում է մարդու իրավունքները և ազատությունները՝ առանց խտրականության ըստ ազգային, ռասայական, կրոնական, սեռային պատկանելության կամ սեռական ինքնության, քաղաքական կամ այլ համոզմունքների, սոցիալական ծագման, ունեցվածքային դիրքի, ծննդավայրի կամ այլ հատկանիշների:

Ղեկավար՝ …… Ստորագրություն՝ ……